



### 23. ԴՈՒՆԻԱ ԳՅՈՋԱԼԻ ԼԵՔԻԱԹԸ

Ժամանակով Հնդույաման քաղաքում կենում էր մի փետ կըտրող աղքատ մարդ: Էս աղքատ մարդը ամեն օր էթում էր մեշեն, փետ էր կտրում, բերում ծախում ու էսպեսով իրա օղուշաղը պահում էր: Մի օր էլ գնացել էր մեշեն. տեհավ մի ղուշ թռավ ու տակը մնաց մի ձու: Էս փետ կտրողը գնաց էն ձուն վե կալավ ու բերեց քաղաքը ծախելու:

Մի Զհուղ ուստ էկավ ու ասեց.— էդ ձվին ի՞նչ տամ:

— Ի՞նչ կտաս,— ասեց նա:

Զհուղը ասեց.— Քսան մանեթ կտամ:

Փետ կտրողը ասեց.— Լա՛վ, լա՛վ, էլ ի՞նչ ես ինձ վրա ծիծաղում, դրուստն ասա, ի՞նչ կտաս:

— Հարիր մանեթ կտամ,— ասեց Զհուղը:

— Ա՛յ շանըմ-գյոզըմ, ինձանից վազն տրի, հերիք ա ինձ վրա ծիծաղես, գին ես տալի՛ դրուստ գին տուր,— ասեց ձու ծախողը:

— Լա՛վ, դե էրկու հարիր մանեթ կտամ,— ասեց ձու առնողը:

— Թե որ կտաս, դե՛ հանի, տո՛ւր,— ասեց ձու ծախողը:

Զհուղը հանեց էրկու հարիր մանեթ ու տվեց նրան: Փետ կտրողը ուրախ-ուրախ գնաց տուն ու նրանից դեն ամեն օր էթում էր

էն հավի տակից ձուն հանում, բերում ծախում էն Ջհդի վրա: էս-  
սես էս աղքատ փետ կտրողը շատ հարստացավ: Մի օր էլ գնաց  
էն հավին բռնեց, բերեց տուն ու իրանց հմար բոլ-բոլ ձու էր ածում,  
հոանք էլ ծախում, հարստանում էին:

Մի օր մարդը ասեց կնկանը.— Ա՛յ կնիկ, արի էթանք էրու-  
սաղեմ, մղդսի դառնանք ու ետ գանք, շունքի էրկսով էլ հրես ծե-  
քացել ենք:

Կնիկը ասեց.— Ա՛յ մարդ, էրկսով էլ էթանք էրուսաղեմ, մեր  
տունը ո՛վ մնա. դու գնա, արի, հետո ես կէթամ:

Մարդ ու կնիկ ունեին էրկու պուճուր տղա: Մարդը մեկել օրը  
վե կացավ ու գնաց էրուսաղեմ: Կնիկը մնաց տանը, սաքի թե մու-  
ղայիթ կենալու: էս կնիկը տենալով որ էն Ջհուդը, որ իրանգից ձու  
էր առնում, շատ հարուստ ա, նրա մոտ մարգ ղրկեց, որ գա իրա  
հետ պսակվի: Ջհուդն էլ ասեց, որ հավի մսից շորվա էփի ու թա-  
գարեք տենա, ինքը իրիկունը կգա: Նա էլ հենց իմացավ. թե ասում  
ա՛ հասարակ հավի մսից շորվա էփի, մի քանի հավ մորթեց ու  
շորվա էփեց: Իրիկունը մարդ ղրկեց նրա մոտ, որ գա: Ջհուդը վե  
կացավ ու էկավ նրա մոտ:

Համա երբ տեհավ, իր հասարակ հավի մսից ա իրա հմար  
շորվա էփել, ասեց.

— Ես խո քու աղքատը չեմ, որ էսպես հավի մսից ես ինձ  
հմար շորվա էփել. ես ուզում էի, որ էն հավի մսից էփես շորվա,  
որի ձուն համեշա ինձ վրա ծախում էիք. էդ տեսակ հավ, խո ես  
էլ առնեմ:

էսօր էսպես անշնորհակալ վե կացավ, գնաց: Մեկել օրը էն  
կնիկը էն հավը մորթեց ու շորվա շինեց նրա մսից:

Նրա էրկու էրեխեքը գնացին տեհան, որ իրանց մերը շորվա  
ա էփել, իրար մեջ ասեցին. «Արի, մենք առաջուց մեր փայր ա-  
ծենք, ուտենք, ով գիտա ետո մեր մերը մեզ շտա էլ»: Նրանք էդ-  
պես էլ արին, մի աման ածեցին, ու նրանց բախտից նրանց ամանն  
դնկավ հավի շիգյարն ու գլուխը: Ջիգյարը պուճուր աղբերը կե-  
րազ, գլուխը՝ մենձը:

Մարդ ղրկեց էս կնիկը Ջհդի ետևից: Ջհուդը էկավ: Համա հաց  
ուտելու ժամանակ նա ուզեց հանի շիգյարն ու գլուխը. պղինձը  
չատ ման էկան, զատ չգտան: Շատ դես ու դեն ընկան, սրան-նրան  
հարցրին, համա ոչ մինն էլ իրա վրա չառավ:

Նրա էրկու պուճուր էրեխեքը, շունքի անմեղ էին ու զադ շէին հասկանում, գնացին ու իրանց մորն ասեցին, որ իրանք են կարե հավի գլուխն ու շիգյարը: Ջուղն ասեց, որ եթե շիգյարն ու գլուխը շղտնեն նա չի պսակվի: Անշիգյար մերը իրա նոքարին հրամայեց որ էս էրկու էրեխանցը տանի քաղաքից դուրս, նրանց սպանի ու նրանց փորից հանի գլուխն ու շիգյարը, բերի տա իրան:

էս էրկու անմեղ, հրեշտակի նման էրեխանցը վեր կալաւ ու շխտի ձեռքը բռնած ճամփա ընկավ: Ըամփին բարի նոքարն ասեք էրկու էրեխանցը:

— Ձեր մերն ասել ա, որ ես ձեզ մորթեմ ու ձեր փորից հանեմ շիգյարն ու գլուխը, որ նա տա Ջուղին. համա ես իմ ձեռները ամբողջ արնի մեջ չեմ շաղղի, ջհանդամը թե Ջուղը շիգյար չի ուտի, գնացե՛ք դուք ձեր մուրազին հասեք, աստված ձեզ բարի ճանապարհ տա:

էս էրկու աղբրտինքը էկան, էկան, ճամփին մի ծեր մարդ պատահեցին:

— Բա՛րե, բարի,— ասեցին էրեխեքը:

— Բա՛րե, աստծու բարին, ա՛յ որդիք,— ասեց ծեր մարդը:

— էս ճամփեքանց մեջ ո՞րն ա լավը, որ բռնենք, էթա՞ք:— հարցրին էրեխեքը:

Ծեր մարդը պատասխանեց.— Որդի՛ք, էրկու ճանապարհ կա էս մինը տանում ա դպա Չինումաչինա քաղաքը, էս մեկն էլ ասանում ա դպա Դունիա գյոզալի հոր թաքավորութունը:

Մենձ աղբերը Չինումաչինա քաղաքի ճամփին բռնեց ու գնաց. համա պուճուր աղբերը գնաց դպա Դունիա գյոզալը: էսպես էրկու աղբրտինք իրարից բաժանվեցին:

Պուճուր տղեն գնաց հասավ Դունիա գյոզալի հոր թաքավորութունը: Ընտեղ նա գնաց մի ոսկերչի մոտ աշկերտ մտավ: էս ոսկերիչը տենում էր, որ երբ էս տղեն առավոտը զարթնում ա, գլխատակին միշտ հինգ հարիր մանեթ ա ըլնում: էսպես ոսկերիչը ամեն օր նրա գլխի աակից հինգ հարիր մանեթ էր հանում: Ոսկերիչը սրանով շատ հարստացավ: Համա խեղճ էրեխեն չէր հասկանում, թե ինչիցն ս, որ քանի գնում իրա ուստեն հարստանում ա:

էս էրեխեն մի քանի տարի ոսկերիչի մոտ մնաց, և նա մի քանի օթախ լիքը փող հավաքեց նրանից: Մի անգամ էլ ոսկերիչը էս էրեխին տվեց իրա շորերը, որ տանի տուն՝ կնկան տա լվաքա-

լու: Համա ուստի կնիկը բարկացավ էրեխի վրա ու շորերը ետ դարձրեց: Էրեխեն էլ էկավ ուստին պատմեց բոլորը, ինչ որ ուստակինը նրան արել էր:

Ոսկերիչը քաղցրութեամբ ասեց.— Արի էթանք տուն, տենամ ինչո՞ւ չի թողում տուն:

Ուստեն մտավ տուն ու էրեխին դռանը թողեց: Ոսկերիչը բարկանալով ասեց կնկանը.

— Ա՛յ կնիկ, էդ ինձ վնաս ես տալի, ես նրան շարթենը մի մանեթ եմ տալի, նրանից ես օրը հինգ հարիւր մանեթ եմ առնում. քանի կաբաս նրա հետ լավ վարվի, որ մեր մոտից չէթա, հեռանա, թե չէ բանեերս բուրդ ա. մաղուղ հարստանում ենք յավաշ-յավաշ:

էս բոլորը էրեխեն դրսից ականջ դրեց, ու երբ ուստեն դուս էկավ տանից, էրեխեն ասեց, որ էլ չի ուղում իրա մոտ մնա, թեկուզ որ շարթենը հազար մանեթ տա: Ոսկերիչը շատ աղաչանք արեց, որ չէթա, համա էրեխեն էլ չսեց ու նրա մոտից գնաց: Իրա հմար, հենց էն քաղաքում մի տուն քրեհեց ու ամեն օր զարթնում, տենում էր, որ գլխատակին մի հինգ հարիւր մանեթ կա: էսպես նա մի լիքը օթախ լցրեց փողով:

Դունիա գյոզալը էս քաղաքի թաքսովորի աղջիկն էր. էնքա՛ն սիրուն, էնքա՛ն նաշխուն, որ հատը շէր ըլնի աշխարքում: Ամենահարուստ մարդիկը՝ էն էլ տարենը մի անգամ, էթում էին նրա ճկութը տենալու ու հազար մանեթ էին տալի: էս տղեն որ իմացավ, թե Դունիա գյոզալի մի ճկութը տենալու համար հազար մանեթ են տալի, ինքն էլ գնաց, հազար մանեթ տվեց ու տեհավ նրա ճկութը: Սրանից հետո ամեն օր գալիս էր տենում նրա ճկութը ու հազար մանեթ տալի ամեն անգամին:

Դունիա գյոզալը ինքն իրան մտածեց. «էս տղի մեջ հունար կա, որ ամեն օր գալիս ա ինձ տենալու ու հազար մանեթ ա տալի: Ուրիշ հարուստ մարդիկ տարենը մի անգամ են գալի, համա սա նր պուճուր տեղովը ամեն օր ա գալի»:

Մի օր էս տղին իրա մոտ կանչեց ու իրա հետ հացի հրավիրեց: Հացի վախտը հրամայեց իրա նոքարներին, որ գինին արաղի հետ խառնեն ու գնեն էս սղի առաջ, որ խմի: Սրբ որ լավ հարբեց տղեն, իրա նոքարներին ասեց, որ մինը նրա ձեռներից, մինը նրա ոտներից բռնեն ու ժաժ տան: էնքան ժաժ տվին, որ հավի ջիդարը նրա փորից վեր ընկավ բերնովը ու Դունիա գյոզալը կուլ տվեց:

Հետո իրա նորարներին հրամայեց, որ վե կալնեն էն տղին դու գցեն: Առավոտը տղեն վեր կացավ տեհավ, որ քուշումը ընկած ա: Բստեղից տղեն վեր ա կենում ու գնում: Գալիս ա մի իդու դուան առաջ կանգնում: էս իդու կատեպանը, որ մի պառավ մարդ էր, հարցրեց.

— Ա՛յ որդի, ո՞ւր ես էթում:

— Ըսկի, ոչ մի տեղ,— ասեց նա,— ինձ քեղ մոտ շի՞ր վեր կալնի. անհեր, անմեր, ելիմ տղա եմ:

Մեր կատեպանը նրան ուրախությունով ընդունեց, ասելով.

— Սրանից դենը միշտ ինձ մոտ, էս իդում կմնաս. ծառերի բոլոր մրգերը կարաս ուտի, համա էս էրկու խնձորենի ծառերից շուտես: Զունքի որ ուտես էս մենձ-մենձ խնձորներից, երկեհ-երկեն պողեր դու կդան դիխիդ. հենց որ էս պուճուր խնձորները ուտես՝ էլի պողերը վեր կթափեն. մուղայիթ կաց, որ բերանդ չդնես:

Տղեն ուրախացավ ու մտքումը ասեց. «Ծս հիմա Դունիա գյոզալին շանց կտամ»: Մենձ-մենձ խնձորներից մի թաքախ վեթ կալավ ու ընկավ քուշա-քուշա.

— Ա՛յ լավ խնձոր, ա՛յ լավ խնձոր, գնա՛ց, շմնա՛ց:

Դունիա գյոզալը ասեց.— Մի խնձոր վեր գցի տենամ, թե լալն ա կառնեմ:

Նա գլուխը ակուշկից դուս էր հանել: Տղեն մի խնձոր գցեց ու ինքը լու ու կուլ փախավ, որ չէրկա, թե նրան խնձոր ով տվեց: Նա հենց որ խնձորը կերավ, էրկու դհից էլ էնպես մենձ-մենձ պողեր դուս էկան, որ էլ գլուխը չկարաց ներս տանի ու էսպես մնաց:

Տղեն քուշա-քուշա ման էր գալի ու բղավում.

— Ով ուզում ա՛ էթա Դունիա գյոզալի էրեսը տենա անփող: Առաջ հաղար մանեթ իք տալի՝ նրա մի ճկութը տենում, հիմա անփող գնացեք նրա սաղ էրեսը տեհեք:

էլ բազարավոր, էլ մարդ շմնաց, էկան հավաքվեցին տենալու: Համա ոչ մինն էլ ա չկարաց նրան լավացնի: Թաքավորը մնացել էր շվարած մնացած:

էն տղեն վեր կալավ մանր խնձորները, գնաց թաքավորի մոտ ու ասեց.

— Ծս կարող եմ նրա պողերը կտրտել:

Ազըիկն էլ ասեց.— Թե որ լավացնես ինձ, ես քո՞նը, դու իմք:

էն մանդր խնձորները տվեց աղջկանը, որ ուտի, ու էն սհաթին պոզերը վեր թափեցին: Էն գշերը տղեն աղջկա մոտ մնաց: Համա գիշերվա մի վախտ իրա նոքարներին հրամայեց, որ տանեն բուշեն գցեն: Առավոտը տղեն զարթնեց, տեհավ որ քուլումն ա բնկած: Տեղից վեր կացավ ու գնաց: Քուլումը ռաստ էկավ իրեք մարդկերանց, որոնք իրար հետ կռիվ էին անում: Էն իրեքն էլ մի աղբոր էին:

Հարցրեց սրանց.— Ա՛յ աղբոր, ինչի՞ եք կռվում:

Նրանցից մեկը պատասխանեց.— Մենք իրեքս էլ ախրերտինք ենք, ունենք մի Գդակ, մի Դագանակ, մի էլ Սուփրա, մեր կռիվը հենց սրանց համար ա:

— Դրանց մեջ ի՞նչ հունար կա,— հարցրեց տղեն:

Նրանցից մեկը պատասխանեց.— Էս Գդակը ով որ ծածկի՝ նրան էլ շեն տենա, էս Փետը ում որ խփես ու ինչ ուզենաս՝ կրինի, էս Սուփրեն էլ ուր որ ուզենաս կտանի ու ինչ տեսակ կերակուր ուզենաս, մեջը կդտնվի:

Էս տեսնելով տղեն մտածում ա, որ սրանով կարա Դունիա գյոզալի հախիցը գա: Ասում ա.— Տենամ դրանք ի՞նչ զագ են:— Էս ասում ա ու Գդակը դնում զլխին. մնում ա Դագանակն ու Սուփրեն ձեռին, ու նրանք տղին էլ շեն կարում տենա:

Աղբերտինքը իրար մեջ ասեցին.— Հա՛, էդ մինը նա շատ լավ արեց. շունքի մենք զուր տեղը պտի իրար հետ կռվեինք, լավ էլավ՝ նա տարավ, ո՛չ ինձ էլավ, ո՛չ քեզ, ո՛չ էլ նրան, լավ հալալ դաստան կտրեց:

Տղեն Գդակը դրեց գլուխը ու գնաց Դունիա գյոզալի մոտ: Նա հաց էր ուտում: Տղեն նստեց նրա մոտ ու մի դհից էլ նա էր ուտում: Աղջիկը տենում էր, որ գեռ ինքը մի գթալ շվերցրած, նա իրեք գթալ կուլ էր տալի. ինքն իրան մտածեց. ձելի էն տղեն, ոնց որ չրկում ա, էկեկ առ: Տղեն Գդակը գլխից վեր կալավ ու էրկաց Դունիա գյոզալին:

Դունիա գյոզալը շատ աղաչեց, պաղատեց, որ էս անգամ էլ չասու սիրու խաթեր իրան բան չանի, համա նրան շսեց, Սուփրեն գցեց նրա տակը ու ասեց.— Էս սհաթը մեզ տար Օխտը ծովի հղզին:

Մի սհաթից ետը նրանք Օխտը ծովի կղզու վրա էին: Տղեն ամեն օր էթում էր ավղուշ, մինչև իրիկուն տուն շէր գալի ու նոր

մթննկա տուն էր գալի: Մի օր, ոնց որ էլավ, Սուփրեն տղի մտիցը ընկել էր ու մնացել էր տանը:

Դունիա գյողալը վրան նստեց ու ասեց.— Ա՛յ Սուփրա, քեզ տենամ, ինձ տար իմ հոր մոտ, որտեղից որ բերեցիր:— Մի սհաթից ետ նա իրա հոր տանը նստած էր: Բաքավորը շատ ուրախացավ, որ իրա կորած աղջիկը գտնվեց ու մեծ հացկերույթ էր սարքել, որ ուտեն-խմեն, քեֆ անեն:

Տղեն իրիկունը էկավ, տեհավ ո՛չ աղջիկ կա, ո՛չ էլ Սուփրա: Ըտիրանքից մի քանի ծառեր կտրեց, իրար հետ կապեց, նստեց վրեն ու շրի վրով գնաց Դունիա գյողալի մոտ: Գաակը գրեց գլխին ու գնաց նրա մոտ: Դունիա գյողալը էլի իմացավ, որ տղեն էկել ա, համա էլ չէր կարա պրծնի նրա ձեռից: Տղեն Գաակը գլխից վեր կալավ ու Դազանակով խփեց նրան՝ էջ դառավ. նստեց վրեն ու քջեց ըաղարի միջով դպա Չինումաչինա քաղաքը:

Հիմի գանք սրա աղբորը: Սրա մենձ աղբորը գնաց Չինումաչինա քաղաքը. նրա բախտից էն վախտը Դավլաթ ղուշը թոցնում էին, որ ում գլխին որ կանգնի՝ պտի նրան թաքավոր շինեն: Դավլաթ ղուշը քողաղընա գնաց գուզ էս տղի գլխին կանգնեց: Մարզիկ նրա գլխին տվին ու ղուշը վեր կալան, որ թազա թոցնեն: Էն տղին էլ տարան խալխի մեջ մի պուճախ կոխեցին, որ Դավլաթ ղուշը չկանգնի նրա գլխին: Դավլաթ ղչին մին էլ թոցրին, համա նա էլի գնաց ու գուզ նրա գլխին վեր էկավ: Էս տենալով էլ բան չասեցին ու նրան թաքավոր շինեցին:

Էս վախտը սրա մենձ աղբորը Չինումաչինա քաղաքի թաքավորն էր, որ պուճուր աղբորը էջի վրա նստած գալիս էր դպա նա: Տղեն էջի վրա նստած էկավ հասավ Չինումաչինա քաղաքը: Ըստեղ նրան պատահեցին փետ կտրողներ, ու նա իրա էջը նրանց քրեհով տվեց ու ասեց, որ իսկի եմ չտան ուտելու, անհաց, անջուր բանացնեն ու հետո իրա մոտ բերեն: Փետ կտրողները տարան սոված, ծարավ բանացրին, բանացրին, էնպես որ նխտից ընկավ, էլ ոտներում թաղաթ չկար, որ էթար ու ցխի մեջ վեր ընկավ: Փետ ծախողները ճիպոտ էր, որ հասցնում էին, համա չէր կարում էջը ցեխից դուս գա, չունքի մի քանի օր սաղ անհաց, անջուր էր:

Մարդիկը մի դհից նրանց ղնամիջ էին անում.— Տո՛, անաստվածներ տեսնում եք ոտներում էլ թաղաթ չկա, որ էթա, գուր ընչի՞ եք ծեծում, մեղքը չի՞:

Նրանք էլ ասեցին, որ էլի տերը էնպես ա ասել, որ զադ շտան  
ուտի ու էդպես սոված իրա մոտ բերին: Բեռը վերցրին վրից ու տա-  
րան տվին տիրոջը:

Հետո թաքավորին իրա գլխով բոլոր անցկացածը պատմեց  
տղեն: Դազանակով խփեց էշին՝ էլավ առաջվա Դունիա գյոզալը:

էսպես էրկու աղբրտինք սար, քոլ, աշխարք շափշփելուց հետո  
էլի իրար տեհան ու իրանց փափագը առան, ու շունքի մի հալալ  
մոր ծիծ էին կերել, էլ իրարից շաժանվեցին:

